

ՏՈՒՇԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐՈՒՀԻ ՄԱՂԱՔՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ/ԷԿՈԿԵՆՏՐՈՆ



2019թ. մայիսի 17-ին Տուշայի համալսարանում (Վիտերբո, Իտալիա) տեղեկատվական օր էր՝ նվիրված Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Հայաստանի և Վրաստանի համալսարանների հետ հաջողված համագործակցության պատմությանը: Հայաստանի և Վրաստանի կողմի ներկայացուցները ներկայացրեցին իրենց համալսարանները, համալսարաններում իրականացվող ուսումնական կրթական գործունեությունները, ինչպես նաև իրականացվող հիմնական հետազոտությունների ուղղվածությունները:

Հաջորդ օրերի ընթացքում Նաիրուհի Մաղաքյանը այցելեց Տուշայի համալսարանի իր մասնագիտական ուղղվածությանը հատուկ տարբեր բաժանմունքներ և լաբորատորիաներ, մասնավորապես՝

- Հողերի ֆիզիկայի լաբորատորիա, որտեղ իրականացնում է հողերի ֆիզիկական հատկությունների որոշում: Տեղի ունեցավ ծանոթացում հողերի հատիկային կազմի (տեքստուրա) որոշման նպատակով հողի նմուշառման համար օգտագործվող դաշտային պարագաներին, հողերի հատակային կազմի որոշման համար կատարվող նախապատրաստական աշխատանքների առանձնահատկություններին, հողի առանձին ֆրակցիաների տարրանջատման մեթոդներին և համապատասխան սարքեր-սարքավորումներին:
- Կենսաֆիզիկայի և նանոգիտության կենտրոն, նանոմասնիկների լաբորատորիա: Կենտրոնի մասնագետները ներկայացրեցին լաբորատորիայում առկա տարբեր

մանրադիտակները, նրանց հիմնական աշխատանքային սկզբունքները, կիրառման առանձնահատկությունները, առկա մանրադիտակների միջոցով նանոմասնիկային մակարդակում նյութերի տարատիպ հատկությունների ուսումնասիրությանը և մետաղական նյութերի մակերևույթի սկանավորման գործընթացին: Քննարկվեցին նաև մանրադիտակների կիրառության պոտենցիալ հնարավորությունները բնապահպանական հետազոտություններում:

- Կենսաբանական, ագրոպարենային և անտառային համակարգերի նորարարության դեպարտամենտում, Գյուղատնտեսական քիմիկատների հետազոտման լաբորատորիայում իրականացվեց ծանոթացում ICP OES սպեկտրաչափի և վերջինիս միջոցով քիմիական տարրերի տարրալուծման առանձնահատկությունների հետ:
- Մայիսի 21-ին իրականացվեց այց Իտալիայի ազգային հետազոտական խորհուրդ՝ երկրի էկոհամակարգերի հետազոտական ինստիտուտ, որտեղ իրականացվեց ծանոթացում մթնոլորտային փոշու մասնիկների տարանաջատման ֆիլտրացիոն մեթոդի հետ: Տեղի ունեցավ նաև հանդիպում MENVIPRO ծրագրում ընդգրկված աշխատակազմի հետ՝ քննարկեցին ծրագրի ընթացիկ գործողությունները:

կ.գ.թ. Նաիրուհի Մաղաքյան

30.05.2019թ.